



ԵՐԿՐԱՐԻ ՏԱՐԻ
ԹԻՒ 1.



31 ՅՈՒՆԻԱՐ
1867.

Մ. Մ Ս Ս. Գ Ի Ր

ԱՅԳԱՅԻՆ. ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Այս կը պարտաւորիմք նոր տարւոյս դրան շեմքին մէջ առաջին քայլն արձակելու, կարծես թէ աներեւոյթ ձեռք մի յանկարծ մեր ետեւէն ուսեր նուա թեթեւ հարուած մի կու տայ և կը ստիպէ գլուխնիս ետ դարձնել դէպ իանցեալը, և միթուեան մէջ տեսնել այն թաւալգլոր սահնցող անցնող դարերը որոնց իւրաքանչիւրն թէ բարի և թէ վատ յիշատակագրեր թողուցին սուրբ Աթոռոյս գրասեղանին վերայ, ու այնպէս անցան դնացին:

Միտարանութեանս կեանքը՝ որ ամբողջ ժողովրդեան մի կամ ազգի մի կեանք բնել է, և կրնամ բնել թէ անկէ աւելի ազդեցութիւն է նշանաւ:

Կութիւն ունի կենդանի տղաաց յուշակին մէջ, իւր անցելոյն մէջ կը դիտէ շարք մի դէպքերու ու անցքերու, որոնք կապակցուեցան ունին բնական նուր ազգութեանց որսամուծե հետ: Այս անցից պարագայները խոհուն աչքի մի դիմաց կը նմանին ովկիանոսի բարձրագէղ ավերներու, որոնք լեռնաձեւ կու գան նաւու մի կշտին կը զարնուին ու անոր վրայէն կը սահին կ'անցնին, կամ փշուռելով ետ կը գառնան: Այս նաւս է սուրբ Աթոռս, որ 14 դարէն ի վեր է արիաբար կուրծք տուած է այն ավերներուն, որոնք իրաւունք հերհակ քանի մը կողմերէն իւր վերայ յարձակեր և փշուռեր են: Աւ

Թէպէտ երբեմն պատահած է, որ ա-
նոր ղեկը անխորձ կառավարողի ձեռք
անցած ըլլալով երկիւղալի վտանգնե-
րու հանդիպուցած է նաւը, այսու
ամենայնիւ տեսած եմք որ նախախնա-
մութեան Չեռք մի միշտ պահպանած
է ղեկըր : Այսպէս ուրեմն նոյն Չեռ-
քը ալէկոծեալ նաւը մինչեւ մեր օրը՝
մինչեւ 1866 տարւոյն վերջը բերած
հասուցած, և ճակատեցուցած է, ո՞վ
գիտէ թերեւս որքան ալիքներու ալ
նշաւակ ըլլալու համար : Հարուած մի,
արկածք մի որքան ալ ազդու լինի, օ-
տար ձեռքէ մի ընդունուելուն այն-
քան մարդոյս շնորհորձէր, որքան ըն-
տանի ձեռքէ ընդունածը : Այս է որ
մեր միաբանութիւնն ալ իւր գոյու-
թեանը դէմ եղած սպառնալիքներէն
աւելի՝ իւր բարոյականութեանը դէմ
ազդայնոց կողմէն ընդունած հարուած-
ներուն վերայ կը վշտանայ քանի մի
տարիէ ի վեր : Բայց մեր վստահու-
թիւնը մեծ է սատուածային Ասիա-
խնամութեան վերայ, որ ընդհանուր
ազգին առաջը բարեյաջող ապագայի մի
դուռ բանալով, սուրբ Աթոռս ալ
նորա շնորհքովն դէպ ի նաւահան-
գիստն բարօրութե իւր ղեկը ուղղե-
լով՝ խոհական առաջնորդութիւն Ամեն.
Սրբազան Պատրիարքի մերոյ, անխտանգ
կը նաւորդէ յուրախութի բարեպաշտ
ազգայնոցս և ի պատիւ ընդհանուր
ազգին, որով և ընտանի հարուածներն
ալ օտարաց կողմէն ընդունած սպառ-
նալեաց հետ մէկտեղ կ'անհետանան :

Անցեալ 1866 տարին՝ ընդհանուր
ազգիս յետագէմ ընթացիկ նկատմամբ՝
բաւական վիշտ ու թախիժ թողուց
բոլոր ազգասիրաց և բարեպաշտ ան-
ձանց սրտերուն մէջ : Ամբողջ տարի մի
ազգային հոգեւոր Աթոռն սուրբ Աջ
միսձնի, նոր գահակալի ընտրութեան
պատճառաւ բաւական յազմունքներ

յարուցանելէն յետոյ, նոր տարիս ու-
րախաւթի կ'ողջունէ զնորընտիր Գե-
որգ Սրբազնագոյն Արհւոյն և երբեմն
Կոստանդնուպոլսի արժանաւոր Պատ-
րիարքի քահանայապետութիւն : Աորին
ամենաբարձր Սրբազնութեան ընտրու-
թիւնը և իւր անձին արժանեացը վե-
րայ մեր ունեցած բարի համոզումնե-
րը իրաւունք կու տան մեզ արդէն նոր
ու զուարթագին հորիզոն մի և խա-
ղաղութեան ծիածան մի երեւակայել
թէ ազգային եկեղեցւոյս և թէ ազ-
գին քաղաքական վիճակին վերայ :

Վաղցր է մեզ նաեւ յուսալ, որ ազ-
գային միւս երկու հոգեւոր Աթոռ-
ներն ալ շուտով իրենց արժանաւոր
Առաջնորդներն ընդունելով ըստ փա-
փայրանաց ժողովրդեան, նոր շաւիղ
մի պիտի յորդէն իրենց վիճակայնոց
առաջը դէպ ի լուսաւորութիւն և ի
բարեկարգութիւն, յորում կը յաղ-
թանակէ ճշմարիտ կրօնքը սուրբ եկե-
ղեցւոյս, և կը լռեն նոցա դիմացը ս-
րիշ ամեն տեսակ նորուսոց և օտարա-
ձայն վարդապետութիւնը :

Այս են մեր ջերմ սրտերուն ուխ-
տն ու մաղթանքը զոր կը նուիրեմք
առ բարձրեալն Աստուած, խնդրելով
որ հաշտ ակամբ հայի տառապեալ
որդւոցս Հայկոյ և երկանցս սրբոյն
Ղրիգորի Առաւորի : Հաստատուն
պահէ ինչպէս մինչեւ ցարդ՝ նոյնպէս
մինչ ի գալուստն իւր, նորա հիմնա-
րած եկեղեցին, նորո վրայէն փարատե-
ի մթան արձակուած նետերը ոչ օտա-
րաց ձեռք, այլ որ ցաւալին է իւր
հարազատ սեպուած որդւոցը, որոնք
կը համարձակին նորա արտուածուսոց
վարդապետութիւններն խանգարել,
որ անեղծ և անցաւելում հասած են
առ մեզ, որոնց մէջ է մեր հոգւոյն
փրկութիւնը և բովանդակ ազգու-
թեանս անկորուստ պահպանութիւնը :